

ՃԵՊՈՒՄՆԵՐ

ԿԱՐԱՊԵՏ ԵԱՀՊԱՁԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԵՈՒՐՁ

Յխուն տարիկ աւելի՝ մոռացութեան թանձր վարագործին ետին թաքնուած մնալէ ետքը, Արդա-լութեան աստուծոյն բազինին երկրպագու՝ իր աշակերտներէն աղնուական հողիի մը բողոքի աղա-դակովը դուրս եկաւ, ժամանակին հետզհետէ թան-ձրացող մուշին մէկէն, Կարապետ Շահպաղի բա-նադրանքին ողբերգութիւնը:

Այն գեղեցիկ, հզօր, օրէնսդատական ու լեղ-ուաղխական գլուխ գործոց պաշտպանողականնե-րէն ետքը, զոր անվարան ստորագրեց ողբացեալ տաղանդաւոր դրչի ու խօսքի վարպետը, Մէթր Հմայակի խորոյն, եւ որուն արձագանք եղաւ Պ. Արշակ Զօպանեան՝ թէ՛ իր խօսքը եւ թէ՛ «Ա-նահախ»-ին էջերը լայնօրէն տրամադրելով, ի՞նչ կը մնայ ինծի ընծի պաշտպանութեանը համար աւ-ս կատարուած մեծ անարդարութեանը զոյն, որ զմեծ երգչանի մը շանճարին կը կարօտի, սեւ-Փոնիի մը ձեւով արտայայտուելու համար», ինչ-պէս ըսած էր Մէթր խորոյնին իր այնքան դե-ղեցիկ վերջաբանին մէջ:

Եւ սակայն, քանի որ ի սպառ լռեց այդ աղ-նիւ ձայնը, Կարապետ Շահպաղի այս դժբախտ խնդիրը (*) պատմութեան յանձնուելէ առաջ, խղճի պարտք մը կը ծանրանայ վրաս, սրբագրել մէկ քանի բացայայտ սխալներ կամ անճշտութիւն-ներ՝ գանազան թղթակիցներու կողմէ յիշատակ-ուած, իրեն մէկը՝ որուն մանկութիւնը անցած է լսելով, ամէն օր, այդ մեծ մարդուն ընտանե-կան դժբախտութիւնները:

(*) Ուշադրութեան արժանի է այն խկայ փո-փոխութիւնը, զոր կրած է մաշակային քմբաձումը, այս 50-60 տարիներու ընթացքին: Աւթօղ այդ տաւաբ, այսօրուամ ակնկոյտի դիտուած, քեթեթ-րու առօրեայ լուրերու հանգստիմանքի միայն պիտի ունենայ:

1.— Միայն է թէ Տիկին Երմոնէ Կարապետ Շահպաղ, ծնեալ Եռուսեփեան, իր վեց զաւակնե-րը հետը առած ու վերադարձած է հօրը տունը: Անիկա լքած է ամուսնական յարկը, հոն ձգելով իր վեց անշափառաւ գաւազանը. վաճան, Գրիգոր, Տիգրան, Ներսէս, Սրբուհի, Տիգրան, երեքը առ-սը տարեկան, կրտսերագոյնը տասն ամուսան, ձը-ղած է դանոնք յոյն սպասուհիի մը ձեռքը, անիւր՝ նամ, ու դացած է իր ընտանիքին մօտ, Փարիզ, ուր անցուցած էր արդէն իր պատանեկութեան տարի-ները: Հոնկէ, նամակ մը դրած է իր ամուսնոյն, Կարապետ Շահպաղի, յայտնելով թէ որոշած է շվեդադանաւ, եւ արտօնելով քայն վերամուսնա-նալու:

Այդ նամակով է որ Կարապետ Շահպաղ դի-մած է Պատրիարքարան, պահանջելով որ կս'մ յորդորեն ու իր ամուսնական յարկը վերադարձնեն տիկինը, որովհետեւ իր զաւակները մօր պէտք ու-նին, կամ յամուսնալուծեն զինքը, եւ վերամուսնու-թեան արտօնութիւն տան:

2.— Որ եւ է փաստ չունինք թէ նախապէս կապ մը գոյութիւն ունէր արդէն Կարապետ Շահ-պաղի եւ Տիկին Յուստիանէի միջեւ: Այդ վեց զա-ւակները փա՛ստ մըն են սակայն, որ Տիկին Շահ-պաղ լքուած կին մը չէր:

Ընդհակառակը, Տիկին Յուստիանէն՝ Կարա-պետ Շահպաղի ընտանիքէն ներս մտած է, այդ լքուած պղտիկները ինամելու պատրուակին առկ, անոնց մօրը մեկնելէն նոյնք, եւ արդարեւ դրու-ղած է անոնցմով ճշմարիտ մօր մը պէս, մինչեւ թանադրանքին, իսլամացումին, եււ. եղբորական թուականները:

Այդ իսլամացումէն հոտն ալ, Կարապետ Շահ-պաղ, հակառակ անոր որ այնքան անուպազ կեր-

պով դուրս չպարտած էին զինքը իր եկեղեցիին ծոցէն, չէ ուզած սակայն թուրք միեւնոյսի մէջ փոխադրել իր դաւանները: Անոնցմէ չորս անդրանիկները, Վահան, Գրիգոր, Տիգրան, Ներսէս, տասը տարի ընդունակ Գառնդէղի Ֆրէրներու վարժարանը դրած է, ուրկէ, յաջորդաբար, աւարտողները կը զրկուէին եւրոպա, իրենց հօրը հետ համախորհուրդ:

Երկու կրտսերագոյնները, Սերուհին եւ Տիրանը, ստիպուած եղած էր իր տունն առնելու, միշտ յոյն սպասուհիներու խնամքին յանձնուած (քանի որ, իսլամացումէն ետքը, բաժնուած էր Տիկ. Յուստիանէէն), բայց երբ Սերուհին 13 տարեկան եղաւ, եւ Թրքուհիի տարազ հագնելու տարիքն ունեցաւ, ազգականներ եւ տունին մտերիմ բարեկամ՝ Տրապիզոնցի Աստուածատուրեան Հաճի աղան, յոյն սպասուհիին մեղաւկցութեամբ, եւ Կարապետ Ծահպազի հաւանութեամբ, փախուտ մը կըրգադրեցին, եւ առաւօտ մը, արշալոյսին, նաւակով, Սերուհին տունէն հեռացուցին: Տիկին Ծահպազ այն ատեն Պոլիս վերադարձած էր: Փախուտը կարգադրողներու եւ իր իսկ ընտանիքին ստիպումներուն առկ, համակերպեցաւ Սրբուհի զովն առնել, բայց չկեցաւ սերժանտի զայն: Ատեն մը ետքը, տարաբախտ աղջիկը զնայց նկիւտոս, ուր կը գտնուէր իր եղբայրը Ներսէսը, շատ համեստ դրոժով մը:

Ընտանիքին քամակը խորտակող այդ տղերք դուքսն անմեղ զոհերը, շտուկացին իրենց վրայ ծանրացող այդ դժնդակ լուծին, եւ կանուխէն մահացան, ինչպէս կրտսերագոյն Տիրանը, որ նոյն ձեւով վերջացուց իր խամրած կեանքը, Պոլսոյ մէջ:

Երեք երէցները, Վահան, Գրիգոր, Տիգրան, իրենց աշակերտած միաբանութիւններուն կողմէ միսիոնէր դարձած, զրկուած են հեռաւոր գաղութները, նախնական ժողովուրդները շահելու համար այն Սերոյ կրօնքին, որուն պաշտօնեաները այնքան խիստ ու անարդար էին իրենց հօր եւ իրենց ամենուն համար:

3.— Մեն իզդիլի մէջ, իզգէթ պէյի արտայայտութիւնը սխալ մեկնուած է: Կարապետ Ծահպազ, այնքան գնահատուած էր թուրք կառավարութենէն, որ իր իսլամացած ատենը՝ Շէյխուլ-Իսլամը մասնաւոր փէրվայով գերեկ կացուցած է

զինքը՝ իսլամական կրօնքը յատկանշող տրամադրութենէն, «Պետութեան համար այնքան օգտակար անձնաւորութեան մը կեանքը, յառաջացած տարիքի մէջ, չլիտանգելու համար»:

Իզգէթ պէյի արտայայտութիւնն եղած է, որոշապէս գիտեմ, սապէս. «Ախսո՛ւ» ըրին մարդուն (Կարապետ Ծահպազին) ձեր ազգակիցները: Անիկա քրիստոնեայ մնալով, Արդարութեան նախարարի խորհրդական պիտի ըլլար (այդ պաշտօնը, կարծեմ իբր առաջին բարենորոգում, վերապահուած էր Հայերուն): Իսլամանալով, այդ իրաւունքն կը զրկուի:

4.— Սխալ է թէ Կարապետ Ծահպազ ազգային կեանք չէ ունեցած: Անիկա եղած է անդա՛րթ՝ Աղզային եւ թէ՛ Բաղաքական ժողովներու, եւ մնացած է մինչեւ իր բանագրուիլը:

5.— Կարապետ Ծահպազ Հայ մնացած է մինչեւ վերջը՝ սրտով, հոգով, գործով: Անիկա օր մը ըսած է՝ իր մտերիմներէն Հրանտ Ասատուրի. «Ինչո՞ւ կը տառապիք, իղբայր, դաւանափոխ ըլլալով՝ ազգս, ցեղս, արինս չե՛մ փոխեր: Հայ եմ, եւ Հայ կը մնամ»: Հրանտ Ասատուրէն դատ, իր մտերիմներն էին տակաւին ամերիկ. քննապահատան խորհրդական Արշակ Ծմաւունեան, անոր եղբայրը՝ պատմալիշ Ծմաւունեան, Պոլսոյ հայաբնակէն վրայ ծանօթ միջազգային փաստաբան Մէթր Պարոցցի: Անոնց ամէնքէն կարծիքը ուզած եմ, տարիներ ետքը, ինծի համար առեղծուածա՛ր յին մնացած դիմազին մասին այս մեն մարդուն, անոր բարոյական ուժ մտաւորական արժէքներուն մասին, առարկայօրէն իմ սեփական կարծիքս կադ մէկ կարեւորու համար իր մասին: Եւ ամէն անգամ, սրտի ճկումով, քայլք հպարտօրէն լսած եմ այն բոլոր ներքուին ու դրուատիքը, զոր կու տային իւր արժանաւոր անձերը՝ Կարապետ Ծահպազի մասին:

Այս առթիւ կ'արժէ յիշել, որ իր կեանքին վերջին տարիները՝ պաշտպանած ու յաջողացած է՝ Կարկուտի դատ անունով ծանօթ Երուսաղէմի վանքին մէկ կարեւոր դատը: Նոյնպէս, Վճռաբեկ Ատեանի անգամ եղած ատենը, ջերմապէս պաշտպանած է Հայ յեղափոխական քաղաքականներ, որոնք, երեք հոգի, մահուան դատապարտուած էին՝ Թուրք մը սպաննած ըլլալուն համար: Կարապետ Ծահպազ, պատժական օրէնքին



պատշաճ տրամադրութեան վրայ հիմնուելով, կը փատտէ թէ մէկ սպաննուողի համար, մէկ հոգի միայն կարելի է մահուամբ պատժել:

Դատապարտուած Հայերէն երկուքը կ'ազատին այդ կերպով: Բայց Կարապետ Շահպաղի չի ներուիր՝ ի նպատակ Հայերու ըրած իր այս միջամտութիւնը, եւ, աստիճանադրկումով, Վճռաբեկ Ատենան Պատժական ճիւղէն կը փոխադրուի Առևտրական ճիւղը:

6.— Ու վերջապէս, իբր ապացոյց այն չարարատիկ ազդեցութեան զոր ունեցած են իր մրցակիցները Յարութիւն Պատրիարք Վեհապետեանին վրայ, մինչեւ բանադրանքի մշակու համար զայն, կրնամ յիշել թէ 1891ին, երբ Վեհապետեան արդէն Պատրիարք էր Երուսաղէմի, Կարապետ Շահպաղի եղբայրը, ընտանեօք, ուխտի գացած է Երուսաղէմ: Եւ որովհետեւ չէր ուզեր Պատրիարքը տեսնել, իսկաւ վշտացած ըլլալուն ահոր դէմ, չէ ուզած Ս. Յակոբայ վանքը այցելել, իջեւանած է պանդոկ մը, իրեններուն հետ, եւ փափաքած է ծածուկ պահել իր ներկայութիւնը: Յարութիւն Պատրիարք իմանալով, սակայն, իր կողմէ Պապեան վարդապետը զրկած է, շատ ստիպումով ու խնդրանքով զանոնք վանք հրաւիրած է: Ու Մեծ Դահլիճէն մինչեւ դուռը յառաջանալով, Յարութիւն Պատրիարք դիմաւորած է իր հօրը, եւ ամենուն ներկայութեան, հիւրամեծար վարդապետներուն, հօր տիկինին ու փոքրիկներուն ներկայութեան, վեղարը ուսին վրայ ձգած, արտասուածքը աչքերով ուղեւորած է Շահպաղի եղբայրը, ու ներողութիւն խնդրած է, չարամխնդրու խորհուրդին անասլով՝ այնքան պատուական Հայու մը դէմ այնքան անողորմ պատժ մը ստորինամ ըլլալուն»:

7.— Վերամուսնութեան կամ կրկնամուսնութեան

թեան առասպելը ամբողջովին յերկրածոյ է, հիմնովին ստեղծուած, ինչպէս կ'ըլլայ նմանօրինակ բոլոր ողբերգութիւններու ընթացքին, հանրային դատաստանին մատչելի դարձնելու համար ահաւորութիւնը կանխամտածած ոճիրին:

Որիմեան Հայրիկը, Աղեքսանդր Մէրեճեզուլին՝ որ տունին ամենօրեայ մտերիմ բարեկամները եղած են՝ ամենէն տաղնապալի օրերուն, պիտի հանդուրժէին այդ տեսակ ապօրինի արարքի մը: Ընդհակառակը, Շահպաղ ողի ի բռնի պաշտպանած է իր տեսակէտը՝ Պատրիարքարանին առջեւ, ամենուն ըսելով. «Ես Օրէնքի մարդ եմ, օրինապէս ամուսնանալու իրաւունք ունենալ կ'ուզեմ: Զաւակներս մօր պէտք ունին: Բերէ՛ք իրենց մայրը, կամ արտօնեցէ՛ք որ ուրիշ մայր մը տամ իրենց: Մեւ Որիմեան, գլխուն վրայ կեցած, կ'աւաղէ եղբ. «Ախո՛ւս, զաւակս Շահպաղ, թէ՛ այսօր Կաթողիկոս ըլլայի, քեզ ձեռքովս կը պահէի:» Եւ իրաւ ալ, երբ Կաթողիկոս ընտրուեցաւ, իր առաջին զործերէն մէկը եղաւ ամուսնալուծման ներմուծումը Հայաստանեայց Եկեղեցիին օրէնքներուն մէջ:

Կ'ըսուի թէ, կրկնամուսնութեան այդ առասպելը իր ծնունդը ունի անոր մէջ, որ Տիկին Յուստիանէ, որ այդ թուականին Կարապետ Շահպաղի տունը փոխադրուած, յանձն առած էր փոքրիկներուն մայր ըլլալ, օր մը կ'երթայ կարճ-կարողի մը: Հոն ներկայ յաճախողուհիներու քամահրական ու չարամխտացած, երբ իր անունը կը հարցնեն ար. ծանաղբելու համար, դուրսը բարձր կ'արտասանէ. «Տիկին Շահպաղ»:

Կ'իբերը լղթալաղքած ընկու պատուակը գտնուած էր՝ հակառակողներուն մօտ:

ԶԱՐՈՒՀԻ ՊԱՆՐԻ